ՆԱԽԱԲԱՆ

Մարդկությունն ակնհայտորեն թևակոխում է պատմական զարգացման մի փուլ, որը հատկանշական է նրանով, որ երկրագնդի տարբեր մասերում ապրող մարդկային խմբերն ու կազմավորումները (օրինակ՝ ազգերը, պետությունները) գոյատևում են յուրահատուկ համակեցութային հարաբերություններ պարտադրող պայմաններում:

Նման պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ստանում համակեցության սուբյեկտների օրգանական ամբողջության ամրությունն ու **դիմակայական հզորությունը** պայմանավորող ներքին **համախմբվածության և համակազմակերպվածության որակը,** որն ապահովվում է **համագործակցության** (այլ ոչ մրցակցության) վրա հիմնված ներքին փոխազդեցություններով և փոխհարաբերություններով որոշվող **կենսակերպով**:

Նկատենք նաև, որ համամարդկային համակեցության դեռևս մրցակցային ու հակամարտային բնույթով պայմանավորված բազմաբնույթ հարաբերությունների հանգամանքներում **ստեղծագործական օժտվածությունն ու նորարարական գործունեության ծավալումը** համակեցության սուբյեկտների համար (օրինակ՝ ազգությունների կամ պետությունների) դառնում են ոչ միայն ինքնահաստատման ու ինքակարևորման խնդիրներ, այլև նախ և առաջ անվտանգության և արժանավայել գոյատևման **անհրաժեշտ պայմաններ**:

Սրանով է պայմանավորված այն, որ պետականակերտման ու ազգապահպանման խնդիրներում կրթության ոլորտը մղվում է առաջնային պլան և մտագործունեության մյուս ոլորտներին սպասարկողի կարգավիճակից վերածվում **հասարակության զարգացման առաջատար ու որոշիչ ոլորտի:**

Հայաստանի Հանրապետության կայացման, ամրապնդման ու զարգացման խնդիրներում առանձնահատուկ տեղ են գրավում կրթության ոլորտի զարգացման հիմնախնդիրները: Այս տիրույթում ծավալվում են բազմաբնույթ ու բազմատեսակ իրադարձություններ, որոնք լի են և՛ նշանակալից նվաճումներով, և՛ անցանկալի հետևանքներով:

Շարունակվում են բարեփոխումները կրթության ոլորտում և բուռն բանավեճերն այդ բարեփոխումների իմաստի ու արդյունավետության շուրջ:

Սույն աշխատության ի հայտ գալը թելադրված է ստեղծված իրավիճակի պարզաբանման և կրթության ոլորտի զարգացման հիմնախնդիրնե-

ռում ինքնակողմնորոշման հենքի կառուցման անհրաժեշտությամբ:

Հիմնական մտադրություններն են.

- Վերլուծել ու գնահատել հանրապետությունում տարածված մանկավարժական մոտեցումներն ու պատկերացումները՝ բացահայտելու համար դրանց իսկական արժեքը, օգնել խուսափելու մոլորություններից:
- Ի մի բերել և ամբողջությամբ ներկայացնել մանկավարժական մտքի և փորձի ժամանակակից նվաճումներն ու մակարդակը, ինչը կօգնի բարեփոխումներ իրագործելիս նկատի ունենալ միջազգային փորձն ու զարգացման միտումները:
- Ներկայացնել այն գիտատեսական ու փիլիսոփայական հիմնադրույթները, որոնք պետք է հիմք ու ելակետ հանդիսանան մանկավարժական մտքի հետագա ստեղծագործական առաջընթացի համար:
- Առաջարկել հասարակական համակարգային կառուցումների իրականացման մեթոդաբանություն՝ ի հակակշիռ բարեփոխումների իրականացման մինչև օրս դրսևորվող ինտուիտիվ մոտեցումների:
- Ձևակերպել հանրակրթության զարգացման ռազմավարական ծրագրերի չափորոշիչները:
- Ներկայացնել մանկավարժագիտության, կրթության փիլիսոփայության և պատմության, կրթական քաղաքականության, կրթության կազմակերպման մեթոդական ու գործնական հարցերին նվիրված գրականության ու տեղեկատվական աղբյուրների ընդարձակ ցանկ, որը հնարավորություն կտա ցանկացողներին արագ գտնել և ուսումնասիրել անհրաժեշտ հարցերը:

Հանրակրթությունն անմիջական առնչություն ունի հասարակական կեցության բոլոր մակարդակների հետ, և նրա կազմակերպման հիմնահարցերը մի կողմից՝ ներառում են մտագործունեական բոլոր տիրույթները՝ գաղափարախոսություն, քաղաքականություն, գիտություն ու փիլիսոփայություն, արվեստ ու արարչագործություն, իրավունք ու բարոյականություն, մշակույթ ու ավանդույթ, տնտեսվարություն ու առողջապահություն, մյուս կողմից՝ այդ հիմնահարցերը խիստ փոխկապակցված են և փոխպայմանավորված: Այլ խոսքով՝ հանրակրթության զարգացման հիմնախնդիրները ենթադրում են համակարգային մոտեցումներ և բազմակողմանի ներդաշնակ բարեփոխումներ: Դրանցով է պայմանավորված այն, որ այս աշխատության մեջ արծարծվում են մի կողմից՝ ընդհանուր վերացական հարցեր, մյուս կողմից՝ կոնկրետ փորձ ու իրադրություն: Մի կողմից՝ քննարկվում են գաղափարախոսական ու քաղաքական խնդիրներ, մյուս կողմից՝

մանկավարժության տեսական ու գործնական հարցեր: Մի կողմից՝ շոշափվում են համամարդկային զարգացման հիմնահարցեր, մյուս կողմից՝ ազգային շահերին ու անվտանգությանն առնչվող հիմնախնդիրներ: Այս հանգամանքը կարող է դժվարացնել գրքի ընթերցումը և վանել ընթերցողներին, սակայն սփոփում է նմանատիպ աշխատությունների անհրաժեշտության գիտակցումը:

Աշխատության մեջ քիչ են ներկայացված կրթության կազմակերպման ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների ապահովման հիմնահարցերը: Չժխտելով դրանց կարևորությունը՝ պետք է համաձայնել, որ կրթության զարգացման խնդիրներում դրանք չունեն վճռորոշ դեր:

Հարկ է նկատել մի շատ կարևոր հանգամանք: Աշխատության հիմնական ակնարկը հետևյալն է. պատմահասարակական մեծ ժամանակահատվածի կտրվածքով կրթության կազմակերպման հարցերում նշմարելի է շրջադարձային անցում իրարից արմատապես տարբերվող մի գործունեական իրողությունից մեկ այլ գործունեական իրողության՝ բոլոր առումներով.

- կառավարման առումով. ղեկավարման խիստ կենտրոնացված հրահանգչային համակարգից դեպի ինքնակառավարման համակարգ,
- նպատակների առումով. նվազագույն կրթական մակարդակ ունեցող բազմաթիվ անհատների պատրաստումից դեպի համընդհանուր բարձր կրթական մակարդակի ապահովում,
- կրթության բովանդակության առումով. գիտելիքներից, տեղեկություններից ու դրանց կիրառման կարողություններից դեպի ընդունակությունները և մտածողության համընդհանուր միջոցները,
- ուսուցման գործընթացի բնույթի առումով. խմբային ուսուցումից դեպի կոլեկտիվ ուսուցում,
- ուսումնական խմբի առումով. միամակարդակ ու միատեսակ անհատների խմբից դեպի տարատեսակ ու տարամակարդակ, ինքնակազմակերպող ու ինքնազարգացող կոլեկտիվ,
- համակեցութային հարաբերությունների առումով. մրցակցայինից դեպի համագործակցային,
- կրթական ծրագրերի առումով. կրթական հաստատության ծրագրերից դեպի անհատական կրթական ծրագրեր,
- ինստիտուցիոնալ ձևերի առումով. անկախ կրթական հաստատությունների բազմությունից դեպի կրթական ծառայությունների ցանցային համակարգ,
- իրավական առումով. ուսման և ուսուցման կամավորությունից դեպի

կրթության պարտադիրություն՝ ամբողջ կյանքի ընթացքում,

- դաստիարակության առումով. վարքի պարտադիր կանոններից դեպի բարձրորակ հոգևոր արժեքներով օժտված անձի ազատություն,
- կարգախոսային առումով. «Անփոխարինելի անհատներ չկան» կարգախոսից դեպի «Յուրաքանչյուր անհատ անփոխարինելի բարիք է» կարգախոս:

Նշենք, որ «կրթություն» հասկացությունն օգտագործված է որպես ուսուցում-ուսում և դաստիարակություն երևույթների միասնականությունը բովանդակող հասկացություն: